Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «Միացնելով կետերը/ Connecting the dots» միջազգային կոնֆերանսի շրջանակներում Բելգիայի թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղվող՝

1. Սիրանուշ Մելոյան, ԿԳՄՍՆ Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետ.

Գործուղման վայրը և ժամկետը՝

Բելգիայի թագավորություն, ք. Բրյուսել, 2026 թվականի մայիսի 26-30

Հրավիրող կողմը՝

Եվրոպական կրթական հիմնադրամ

Գործուղման նպատակը՝

1. Մասնակցել Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված՝ «Միացնելով կետերը/ Connecting the dots» միջազգային կոնֆերանսին, որի նպատակն է քննարկել երկրներում կրթության ոլորտում առկա իրավիճակն ու մարտահրավերները և ուժեղացնել մասնակիցների վերլուծական և գործնական կարողությունները՝ կրթության ոլորտում քաղաքականության և ռազմավարությունների մշակման, իրականացման և գնահատման հարցերում,

2. ETF New Learning Award 2026 միջազգային հեղինակավոր մրցույթի մասնակցելը՝ որպես պաշտոնական դիտորդ: Աշխարհի տարբեր երկրներից շուրջ 450 մասնակիցների միջև անցկացված մրցույթի եզրափակիչ փուլ էին անցել ընդամենը 9 լավագույն նախագծեր, որոնց թվում էր Հայաստանը ներկայացնող միակ հաստատությունը՝ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջը: Համաշխարհային քվեարկության արդյունքներով քոլեջի դասախոս Հակոբ Հովհաննիսյան-ի «Community Renewal Lab» նախագիծը զբաղեցրել է պատվավոր 4-րդ հորիզոնականը:

Քննարկման թեմաները՝

Համադրելով հայեցակարգային ըմբռնումը գործնական կիրառման հետ՝ կոնֆերանսը կենտրոնացել է ռազմավարական շրջանակների կառուցման, ինչպես նաև ռազմավարությունների գնահատման, դրանց իրականացման հետ կապված

առաջարկվող կոնկրետ լուծումների վրա: Այս շրջանակում քննարկման հիմնական թեմաներն էին՝

- Կրթության ոլորտում գոյություն ունեցող քաղաքականության և ռազմավարությունների կառուցվածքի և համահունչության վերլուծությունը,
- Ռազմավարությունների արդյունքների չափելիության և ապացույցների կառուցվածքների գնահատումը,

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝
Կոնֆերանսը միտված էր ներկայացնելու բոլոր մասնակից երկրների փորձը քաղաքականություն մշակելու վերաբերյալ, կոնկրետ մարտահրավերային իրավիճակների հիման վրա լուծումներ գտնելու և առաջարկելու վերաբերյալ հարցեր:

Կոնֆերանսը կրել է գործնական բնույթ, անցկացվել է ինտերակտիվ ձևաչափով՝ բազմաթիվ գործնական և թիմային աշխատանքների կատարմամբ՝ հնարավորություն ընձեռելով կոնֆերանսի մասնակից երկրների պատվիրակներին՝ ներկայացնելու սեփական երկրի փորձը, համատեղ քննարկելու գործող ռազմավարական փաստաթղթերի կենսունակությունը և իրագործելիությունը:

Մասնակիցները հնարավորություն են ունեցել ամրապնդելու իրենց կարողությունները՝ վերլուծելու գոյություն ունեցող ռազմավարությունները՝ ուսումնասիրելով խնդիրները, բացահայտելով հիմնական պատճառները և գնահատելով ռազմավարական նպատակների համապատասխանեցումը առկա մարտահրավերներին:

Մասնակիցները յուրացրել են այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս քննելու ռազմավարությունների համահունչությունն ավելի լայն քաղաքականության շրջանակներում, դրանք համեմատելու համապատասխան չափորոշիչների կամ փորձի հետ, ինչպես նաև բացահայտելու հիմնական ռիսկերը, որոնք կարող են ազդել դրանց իրականացման վրա:

Ստորագրություն, ամսաթիվ՝

Սիրանուշ Մելոյան

04.06.2026 թ.